ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Տարբերակված ուսուցումը՝ հայոց լեզվի դասերին

ԱՌԱՐԿԱ՝ Հայոց լեզու

ՀԵՂԻՆԱԿ՝ Քնարիկ Բալասանյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ Խնածախի միջնակարգ դպրոց

Աշխատանքը թույլատրված է պաշտպանության

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏ. ՂԵԿԱՎԱՐ՝ Սոնա Կամոյի Ալավերդյան

ԳՈՐԻՍ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3
1. ՏԱՐԲԵՐԱԿՎԱԾ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ, ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԿԱԶՄԱԿԵՐՊԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ 5
1.1. Տարբերակված ուսուցման էությունն ու տեսակները 5
1.2.Տարբերակման մոտեցումները՝ դասի տարբեր փուլերում 8
1. ՏԱՐԲԵՐԱԿՎԱԾ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ՝ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ 12
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 16
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ցանկացած դասարան կազմավորվում է՝ ըստ աշակերտների տարիքային խմբի: Սակայն դա դեռ չի նշանակում, որ նրանք ունեն զարգացման և պատրաստվածության նույն մակարդակը: Նրանք ուսումնական գործընթացում ցուցաբերում են գիտելիքների յուրացման տարբեր աստիճաններ և առաջ են շարժվում զարգացման տարբեր տեմպերով: Որպեսզի սովորելու գործընթացը կազմակերպվի արդյունավետ, անհրաժեշտ է կազմակերպել տարբերակված ուսուցում՝ մասնակից դարձնելով աշակերտներին, որը միայն ավանդական ուսուցման մեթոդով չի հաջողվում: Շատ կարևոր է այն հանգամանքը, որ կրթությունը համաքայլ ընթանա ժամանակի փոփոխություններին:

Հայաստանի արագ զարագացող կրթական համակարգում մեծապես կարևորվում է դպրոցականների ուսուցման տարբերակված մոտեցումը, որի համաձայն յուրաքանչյուր երեխա հնարավորություն ունի ուսումնական գործընթացում զբաղվելու իր ընդունակություններին համապատասխան աշխատանքով՝ դառնալով ավելի ինքնավստահ, վայելելով ուսման նկատմամբ բերկրանք և կրթական աճ գրանցելով:

Տարբերակված կրթական գործընթացի սկզբունքը հիմնված է կրթության անձնային ուղղվածության բնույթի վրա: Այն հնարավորինս նպաստում է սովորողների անհատական զարգացման իրականացմանը և հաստատում է հանրակրթության էությունն ու նպատակները:

Այսպիսով՝ սույն հետազոտության արդիականությունը բխում է հայոց լեզվի դասերին սովորողների կրթական բազմազան կարիքներին անդրադառնալու անհրաժեշտությունից:

*Հետազոտության **նպատակն է*** ուսումնասիրել հայոց լեզվի ուսուցման գործընթացում տարբերակված ուսուցման դերը՝ նպաստելու աշակերտների անհատական կարիքների առավել արդյունավետ բավարարմանը:

Առաջադիր նպատակի համար սահմանվել են հետևյալ ***խնդիրները.***

- ներկայացնել տարբերակված ուսուցման էությունն ու տեսակները,
- ուսումնասիրել հայոց լեզվի տարբերակված ուսուցման գործընթացը,
- առաջարկել տարբերակված դասավանդման օրինակելի նմուշ՝ սեփական փորձառության հիման վրա:

Հետազոտության օբյեկտը դպրոցում տարբերակված ուսուցման կազմակերպումն է:

Հետազոտության առարկան հայոց լեզվի տարբերակված ուսուցումն է:

Հետազոտությունն իրականացվել է դիտման, տվյալների վերլուծության, համեմատության և հակադրության **մեթոդների** օգնությամբ:

Հետազոտական աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, ենթագլուխներից, եզրակացությունց և օգտագործած գրականության ցանկից:

1. ՏԱՐԲԵՐԱԿՎԱԾ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ, ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԿԱԶՄԱԿԵՐՊԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

1.1. Տարբերակված ուսուցման էությունն ու տեսակները

Ուսուցչի արդյունավետ աշխատանքի նախապայմաններից մեկը ուսուցման բազմազան միջոցներին տիրապետելն է: Սակայն մեթոդի ընտրությամբ և ռազմավարությամբ չի լուծվում ուսումնառության արդյունավետության ապահովման խնդիրը: Ուսուցիչներին մտահոգում է այն հարցը, թե ինչպես կիրառել այդ գործիքները, դասի որ ձևաչափը, որ մոդելը կօգնի հասնել դրան: Յուրաքանչյուր ուսուցիչ, ելնելով իր փորձառությունից, գտնում է մի քանի ռազմավարություն՝ համապատասխանեցնելով դրանք իր առարկային և աշակերտների կարիքներին, տալիս այդ հարցերի լուծումը:

Ուսուցչի գործունեությունը միտված է կերտելու արժանապատիվ քաղաքացի՝ օժտված ազգային և համամարդկային արժեքներով: Աշխատանքային փորձը ցույց է տալիս, որ յուրաքանչյուր դասարանում սովորում են ոչ միայն զարգացման տարբեր մակարդակներով, այլ նաև կոնկրետ առարկայի նկատմամբ տարբեր հակումներով աշակերտներ: Կան աշակերտներ, որոնք հետ են մնում իրենց մտավոր կարողություններով և կան աշակերտներ, որոնց հակումները տվյալ առարկայի նկատմամբ բավական բարձր մակարդակի վրա են: Այս հանգամանքը հաշվի առնելով՝ խնդիր է առաջանում գտնել տարբեր կարողություններ ունեցող սովորողների հետ արդյունավետ ուսուցման ուղիներ:

Որպեսզի ուսումը արդյունավետ լինի, կարևորը ոչ թե այն է, ինչ երեխաները սովորում են, այլ այն, թե ինչպես են նրանք սովորում, և սա այն բանն է, որ մանկավարժները պետք է հաշվի առնեն իրենց երեխաների ուսումնական միջավայրը պլանավորելիս:

Արդյունավետ ուսուցում կազմակերպելու, կրթության բովանդակությունը մատուցելու և կրթության նպատակներն իրականացնելու համար անհրաժեշտ են որոշակի մեթոդներ, հնարներ և ձևեր: Մեթոդների ընտրությունը և կիրառությունն ինքնապատակ լինել չի կարող: Այն կապված է բազմաթիվ խնդիրների և նպատակների հետ, որոնք իրական լուծում կարող են ստանալ միայն հատուկ պլանավորված և կազմակերպված ուսումնական գործընթացի միջոցով:

Խնդիրը լուծելու համար անհրաժեշտություն է առաջանում սովորողների ուսումնառության կազմակերպման գործընթացում կիրառել տարբերակված մոտեցում և հետազոտել, թե ինչքանով է ազդում տարբերակված ուսուցումը ուսումնառության արդյունավետության բարձրացման վրա: Այս խնդրի լուծման համար ուսուցիչը պետք է յուրաքանչյուր աշակերտի հնարավորություն տա ծրագրային նյութը յուրացնել իր

կարողությունների սահմաններում, որպեսզի ուսուցումը հարմարեցվի սովորողի զարգացման տեմպերին, և նա դառնա առավել ինքնավստահ ու վայելի ուսման բերկրանքը: Կարևոր է, որ ուսուցիչն իր ձեռքի տակ ունենա բազմաբնույթ, բազմաշերտ առաջադրանքներ, որոնք կօգնեն նրան իրականացնել տարբերակված ուսուցում: Դասաժամերի արդյունավետությունը մեծապես պայմանավորված է ուսուցման ակտիվ ձևերի կիրառումով: Դրանք օգնում են սովորողներին համագործակցել խմբի անդամների հետ, ստեղծում են խմբի համար բարենպաստ միջավայր և փոխադարձ վստահություն են առաջացնում սովորողների միջև:

Տարբերակումը կարելի է դիտարկել դասի բովանդակության, գործընթացների և արդյունքների համատեքստում: Ստորև ներկայացվում են տարբերակման ամենատարածված ռազմավարությունները.

- տարբերակում՝ ըստ առաջադրանքի,
- տարբերակում՝ ըստ ռեսուրսի,
- տարբերակում՝ ըստ ժամանակի,
- տարբերակում՝ ըստ օժանդակության,
- տարբերակում՝ ըստ արդյունքի:

Տարբերակված ուսուցումը թույլ է տալիս ուսումնական պրոցեսը կազմակերպել՝ հաշվի առնելով անձի անհատական առանձնահատկությունները: Այն ապահովում է բոլոր աշակերտների կողմից կրթության բովանդակության յուրացումը: Տարբերակված ուսուցման պայմաններում ուսուցման պրոցեսը մաքսիմալ ձևով մոտեցվում է սովորողի ճանաչողական պահանջներին և անհատական առանձնահատկություններին:

Տարբերակումը բնորոշվում է սովորողների խմբերի ստեղծումով, որում գործունեության նպատակը, բովանդակությունը, մեթոդները, ձևերն ու արդյունքները տարբերվում են: Այսինքն՝ տարբերակված ուսուցումը անհատական մոտեցում է՝ ոչ թե առանձին աշակերտների, այլ ուսումնական նույնանման կարիքներ և կարողություններ ունեցող սովորողների համար: Այս դեպքում ուսուցիչը ոչ թե աշակերտին է հարմարեցնում ուսուցանվող նյութին, այլ նյութն է մշակում, դարձնում դյուրամարս յուրաքանչյուր աշակերտի համար:

Տարբերակված ուսուցման նպատակն է՝

- Ընդհանուր կրթության բովանդակության յուրացման գործընթացում յուրաքանչյուր աշակերտի համար ապահովել պայմաններ՝ նրա ընդունակությունների, հետաքրքրությունների, հակումների, ճանաչողական պահանջմունքների բավարարման ու մաքսիմալ զարգացման համար: Աջակցել սովորեղներին՝ ուսումնական պրոցեսում, իրենց գիտելիքները ցուցադրելու և

կիրառելու համար: Խաղային մեթոդների միջոցով խթանել, զարգացնել սովորողների ներգրավվածությունը դասապրոցեսին:

- Կիրառել դասավանդման տարբեր ոճեր՝ ապահովելու, որ աշակերտները կարողանան սովորել տարբեր ձևերով, բայց նույն կամ համանման արդյունքներով:
- Խթանել ստեղծագործականութունը՝ օգնելու աշակերտին ավելի ուժեղ կապեր հաստատել, հասկանալ հարաբերությունները և ավելի ինտուիտիվ կերպով հասկանալ հասկացությունները:
- Տարբերակումը կարող է նաև փոխել, թե ինչպես է դասասենյակը կազմակերպվում: Աշակերտները կարող են բաժանվել խմբերի կամ առանձնանալ, եթե նրանք ընտրեն միայնակ աշխատել:

Տարբերակված ուսուցման առավելություններն են՝

- Տարբերակված ուսուցումը թույլ է տալիս ուսումնական պրոցեսը կազմակերպել՝ հաշվի առնելով անձի անհատական առանձնահատկությունները:
- Այն ապահովում է բոլոր աշակերտների կողմից կրթության բովանդակության յուրացումը: Այդ տիպի կրթության կազմակերպման դեպքում սովորողների յուրաքանչյուր խումբ, որոնք ունեն նման անհատական առանձնահատկություններ, գնում են իրենց ճանապարհով:
- Տարբերակված ուսուցման պայմաններում ուսուցման պրոցեսը մաքսիմալ ձևով մոտեցվում է երեխաների ճանաչողական պահանջմունքներին և անհատական առանձնահատկություններին:
- Տարբերակումն կարող է արդյունավետ լինել նաև հաշմանդամություն ունեցող անձանց համար:
- Երեխաների ընտրանքը ապահովելը նշանակում է, որ նրանք ավելի շատ պատասխանատվություն են ստանձնում իրենց սովորելու համար:
- Ուսման մեջ ներգրավվածությունը ձգտում է ավելի ուժեղ լինել, քանի որ այն վերաբերում է երեխաներին, որպես աճի հավասար հնարավորություններ ունեցող անհատներ:

Տարբերակված դասավանդումը ունի նաև իր **սահմանափակումները՝**

- տարբերակված ուսուցումը ուսուցիչներից պահանջում է դասի պլանավորման համար ավելի շատ ժամանակ,
- այն կարող է պահանջել ավելի շատ ռեսուրսներ դպրոցի համար,
- շատ դպրոցներ չունեն մասնագիտական զարգացման ռեսուրսներ, պատշաճ կերպով տարբերակված ուսուցում կազմակերպելու համար:

Հաշվի առնելով այս ամենը՝ այնուամենայնիվ, պետք է նշել, որ տարբերակված ուսուցումը ուսուցչի համար բավականին ծանր և աշխատատար է: Այս դեպքում յուրաքանչյուր աշակերտի կարիքների հայտնաբերումը, ուսումնասիրումը, դասի պլանավորումը մեծ ջանք ու ժամանակ է պահանջում: Ավելացնենք նաև, որ տարբերակված ուսուցման ժամանակ ավելի մեծ ուշադրություն պետք է դարձնել ցածր առաջադիմություն ունեցողներին:

Այսպիսով՝ տարբերակված ուսուցումը հնարավորություն է տալիս մոտիվացնել, հետաքրքրություն առաջացնել ցածր առաջադիմություն ունեցող սովորողների մեջ, որը շատ կարևոր է, և դասարանում ոչ մեկը չի մնում առանց առաջադրանքի: Նրանցից յուրաքանչյուրը հնարավորություն է ունենում իր մակարդակին համապատասխան առաջադրանք ստանալու և ապահովելու իր կարիքները՝ ուսումնական պրոցեսն էլ ավելի հետաքրքիր և արդյունավետ դարձնելու համար:

1.2.Տարբերակման մոտեցումները՝ դասի տարբեր փուլերում

Տարբերակված ուսուցման ժամանակ՝ դասի տարբեր փուլերում, ուսուցիչը կատարում է աշակերտների տարբերակում՝ հիմնվելով նրանց գիտելիքների, կարողությունների և հմտությունների մակարդակի վրա: Այսպիսի տարբերակումը նպատակահարմար է, քանի որ իրականացվում է գիտելիքների յուրացում, ամրապնդում և գնահատում: Տարբերակումը բնորոշվում է սովորողների այնպիսի խմբերի ստեղծումով, որոնցում գործունեության նպատակը, բովանդակությունը, մեթոդները, ձևերն ու արդյունքները տարբերվում են:

Իրավացի է ուսուցիչ Լիլիթ Ենգիբարյանը, որը գրում է. «Տարբերակված ուսուցման ժամանակ ուսուցիչը հաճախ աշխատում է տարբեր աշակերտական խմբերի համար ըստ բարդության աստիճանի ընտրել տարբեր առաջադրանքներ: Նման ընտրության ժամանակ կարող ենք թույլ տալ որոշակի սխալներ, որի արդյունքում

- Թույլ աշակերտների մոտ սովորություն է դառնում միայն հեշտ առաջադրանք կատարելը, ինչն էլ կարող է պատճառ հանդիսանալ նրանց մտավոր զարգացման արհեստական դանդաղեցման համար:
- Հեշտ առաջադրանքների ճիշտ կատարման համար բարձր գնահատական վաստակելը խեղաթյուրում է նրանց ինքնագնահատումը:

- Ավելի ուժեղ աշակերտների մոտ նկատվում է նպատակաուղղվածության նվազում, քանի որ նրանց կարծիքով, ուսուցչի նման մոտեցումը արդարացի չէ»[1]:

Այդ իսկ պատճառով ավելի նպատակահարմար է առաջադրանքները կազմել՝ ըստ բարդության աճման: Տարբերակված առաջադրանքները կազմվում են՝ ըստ հետևյալ հաջորդականության.

1-ին մակարդակում հանձնարարվում է աշակերտին կարդալ ուսումնական նյութը, պատմել՝ առանձնացնելով գլխավոր մտքերը:

I ՄԱԿԱՐԴԱԿ

- Հասկանալ կարդացած տեքստի բովանդակությունը:
- Հասկանալ տեքստում նկարագրված իրադարձությունների հաջորդականությունը:
- Իմանալ բառի հիմնական բաղադրիչները. արմատ, ածանց:
- Կարողանալ բառի մեջ տարբերակել արմատը, ածանցը:

2-րդ մակարդակում հանձնարարվում է աշակերտին կարդալ ուսումնական նյութը, կազմել պլան և հարցադրումներ:

II ՄԱԿԱՐԴԱԿ

- Հասկանալ կարդացածի վերաբերյալ առաջադրված հարցերը:
- Վերաբերմունք դրսևորել գործող անձանց արարքների նկատմամբ, հասկանալ նրանց զգայական ապրումները:
- Իմանալ բառի տեսակներն ըստ կազմության:
- Տարբերակել պարզ և բարդ բառերը:

3-րդ մակարդակում հանձնարարվում է աշակերտին կարդալ ուսումնական նյութը, տալ նյութի համառոտ բնութագրությունը, արտահայտել սեփական դիրքորոշումը:

III ՄԱԿԱՐԴԱԿ

- Հասկանալ կարդացածի վերաբերյալ առաջադրված հարցերը,
- Վերաբերմունք դրսևորել գործող անձանց արարքների նկատմամբ, հասկանալ նրանց զգայական ապրումները:
- Իմանալ բառի տեսակներն ըստ կազմության:
- Տարբերակել պարզ և բարդ բառերը:
- Տարբերակված ուսուցման ժամանակ կարող ենք ցուցաբերել օրինակ այսպիսի մոտեցում՝ հաշվի առնելով երեխաների անհատական կարողությունները.

[1] Լիլիթ Ենգիբարյան, Տարբերակված ուսուցման ռազմավարությունների կիրառումը ուսումնառության խթանման համար, https://lib.armedu.am/files/resource/files/2022-10-03/6b2bcf77477c45623e137ede8527017a.pdf (հասանելի՝ 02.11.2023):

1. **Առաջին մակարդակում** ճիշտ պատասխանելու համար աշակերտը պետք է ունենա գիտելիք, դրանք հիշելու, թվարկելու, բացատրելու, նկարագրելու կարողություն:
2. **Երկրորդ մակարդակը** թելադրում է, որ գիտելիքից բացի նաև համեմատելու կարողություն, իրավիճակը վերլուծելու, դասակարգելու, կապերը բացահայտելու կարողություն:
3. **Երրորդ մակարդակում** անհրաժեշտ է՝ վերլուծություն, պատճառահետևանքային կապեր, բացահայտելու կարողություն գիտելիքների տեղափոխում, ինչպես նաև ինքնուրույն վարկածներ առաջադրելու, դատողություններ անելու գաղափարները համադրելու կարողություն:

Արդյունքները գնահատվում են այսպես. առավելագույնը ստանում է այն խումբը, որն ամբողջությամբ պատասխանել է բոլոր հարցերին:

Տարբերակումը բնորոշվում է սովորողների այնպիսի խմբերի ստեղծումով, որտեղ գործունեության նպատակը, բովանդակությունը, մեթոդները, ձևերն ու արդյունքները տարբերվում են:

Տարբերակված ուսուցումն իրականացվում է 3 հիմնական փուլերով՝

- Ճանաչել յուրաքանչյուր սովորողի անհատական առանձնահատկությունները:
- Խմբավորել սովորողների ըստ իրենց անհատական առանձնահատկությունների
- Տարբերակել յուրաքանչյուր խմբի ուսումնական գործընթացը:

Կարող ենք տարբերակված առաջադրանքները տալ տարբեր ձևերով.

- Ուսուցիչն ընտրում է առաջադրանք յուրաքանչյուր աշակերտի համար:
- Աշակերտն ինքն է ընտրում իր առաջադրանքը:

Այս դեպքում ուսուցիչը պարտավոր է նախապես սովորողներին ներկայացնել առաջադրանքի բարդությունը և խորհուրդներ տալ, թե ո՞ր առաջադրանքն ընտրի:

- 2-րդ դեպքում ուսուցիչը կարող է ներկայացնել առաջադրանքի բարդությունը, բայց ընտրությունը թողնել աշակերտին:
- 3-րդ դեպքում աշակերտները իրենք են որոշում առաջադրանքի բարդությունը, իրենք էլ ընտրում: Կամավոր ընտրության սկզբունքով կատարվող առաջադրանքները կարող են նաև աշակերտները իրենք գտնել ու առաջարկել:

Առաջադրանքները կարող են նպատակաուղղված լինել թեմայի յուրացմանը կամ էլ բացթողումների լրացմանը: Տարբերակված ուսուցման ժամանակ աշակերտները կարող են ստանալ ծրարներում համապատասխան հրահանգավորումներով առաջադրանքներ. գծագրեր, նկարներ: Աշակերտն անհրաժեշտության դեպքում կարող է դիմել դրանց օգնությանը, կարող է չդիմել:

Տարբերակված ուսուցումը հնարավորություն է տալիս աշակերտին որոշել, թե ուսումնական նյութի յուրացումը ո՞ր մակարդակում կարող է յուրացնել: Սակայն անհրաժեշտ պայման է, որ այն չպետք է ցածր լինի պարտադիր նվազագույն մակարդակից, և ուսուցիչը ուսումնական նյութը պետք է ներկայացնի առավելագույն մակարդակով: Եթե մի աշակերտ ցանկանում է առարկան ուսումնասիրել նվազագույն մակարդակով, իսկ մյուսն՝ առավելագույն, ապա այդ հնարավորությունը նա պետք է ստանա: Այսպիսով, տարբերակումը հաշվի է առնում ոչ միայն աշակերտների ինտելեկտուալ ընդունակությունները, այլև հետաքրքրությունները[2]:

Տարբերակված ուսուցման ներդրման ժամանակ բացահայտել են, որ շատ աշակերտներ, որոնք այս կամ այն առարկայից ունեցել են խոր ընդունակություններ, չեն ցանկացել ընտրել առավելագույն մակարդակը: Այդպիսի պատկեր է նկատվել նաև մնացած առարկաների նկատմամբ: Նշանակում է, որ երբեմն աշակերտը մի առարկայից ընտրում է նվազագույն մակարդակը, նպատակ չի հետապնդում, որպեսզի մյուս առարկայից ընտրի առավելագույնը: Այդպիսի աշակերտի հետաքրքրությունները այլ են. սիրում է զբաղվել սպորտով, արվեստով, շփվել ընկերների հետ:

Տարբերակված ուսուցման ընթացքում կարևոր է երեխայից ստանալ հետադարձ կապ: Աշխատանքի ընթացքում դիտարկելիս կատարվում է աշակերտների կատարած աշխատանքների արձանագրություն (նշվում են կատարված սխալները, դժվարությունները, որոշվում է առաջընթացի դինամիկան):

[2] Ամիրջանյան Յու., Սահակյան Ա., Մանկավարժություն, Եր., 2005, էջ 319:

1. ՏԱՐԲԵՐԱԿՎԱԾ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ՝ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Հայոց լեզվի ուսուցման ժամանակ ևս տարբերակված ուսուցման կամ մեթոդի նպատակն է սովորեցնել բոլորին իրենց հնարավորությունների, կարողությունների մակարդակով, հարմարեցնել ուսումը աշակերտների տարբեր խմբերի առանձնահատկություններին:

Տարբերակումը՝ որպես դասապլանավորման մաս, ներառում է դասարանում անհատների և խմբերի որոշակի կարիքները հոգալու համար ուսուցիչների ձեռնարկած մանրակրկիտ քայլեր, ինչը պահանջում է լրացուցիչ ջանքեր:

Հարկավոր է ստեղծել տարբերակված նպատակների համակարգ, որը կհենվի հետևյալ հարցադրումների վրա:

- **Բոլոր աշակերտները պետք է...**
- **Աշակերտների մեծ մասը հարկ է, որ..**
- **Որոշ աշակերտներ կարող են...**

Հայոց լեզվի ուսուցման ժամանակ տարբերակված ուսուցում կազմակերպելիս ուսուցիչը պետք է ունենա հստակ նպատակադրումներ: Ուսումնական որոշակի նյութի ուսումնասիրությունից և ուսումնասիրության արդյունքները չափելուց հետո դասարանը «բաժանվում է» խմբերի.

1-ին խումբ. ուսումնական նյութը յուրացրած աշակերտներ, որոնց հետ անհրաժեշտ է տանել աշխատանքներ գիտելիքների ընդլայնման և խորացման ուղղությամբ,

2-րդ խումբ. աշակերտներ, որոնք լավ չեն յուրացրել ուսումնական նյութը և ունեն բացթողումներ, և որոնց հետ տարվում են համապատասխան աշխատանքներ,

3-րդ խումբ. աշակերտներ, որոնք ունեն խնդիրներ ուսումնական նյութի յուրացման հարցում, և որոնց համար մշակվում են համապատասխան առաջադրանքներ:

2-րդ խմբի աշակերտների համար որպես խորհրդատու և ուսուցչի օգնական՝ կարող են լինել 1-ին խմբի աշակերտները, իսկ 3-րդ խմբի աշակերտների համար՝ 1-ին և 2-րդ խմբի աշակերտները:

Հայոց լեզվի ուսուցման ժամանակ տարբերակված ուսուցման նպատակն է ընդհանուր կրթության բովանդակության յուրացման գործընթացում յուրաքանչյուր աշակերտի համար ապահովել պայմաններ՝ նրա ընդունակությունների, հետաքրքրությունների, հակումների, ճանաչողական պահանջմունքների բավարարման ու մաքսիմալ զարգացման համար:

Ուսուցիչը պետք է ունենա գործիքներ, որոնցով կարողանա չափել, թե՝

▪ որտե՞ղ ենք մենք,

▪ինչպե՞ս կարող ենք ստանալ,

▪ու՞ր ենք գնում:

Սովորողը պետք է իմանա՝

▪ի՞նչ ես գիտեմ,

▪ ի՞նչ եմ ուզում իմանալ,

▪ ի՞նչ ես սովորեցի:

Տարբերակված ուսուցման համար անհրաժեշտ է՝

▪ բովանդակություն,

▪ գործընթաց,

▪ապրանք,

▪ուսումնական միջավայր:

Ուսուցիչը պետք է սովորողին ժամանակ հատկացնի աշխատանքի կատարման համար ինքնուրույն ուղիներ գտնելու, ընտրություն կատարելու, տարբեր գնահատականներ տալու ուղղությամբ: Այս ռազմավարությունն օգնում է սովորողներին ավելի պատասխանատու դառնալ: Այս գործընթացը ներառում է այն, թե ինչպես ենք մենք դասավանդում, և ինչպես են աշակերտները սովորել:

Վերոշարադրյալը առավել պատկերով և ընկալելի դարձնելու համար ներկայացնենք տարբերակված ուսուցմամբ դասի պլան, որն իրականացվել է Սյունիքի մարզի Տեղ համայնքի Խնածախի միջնակարգ դպրոցի 8-րդ դասարանում: Դասարանի ընտրությունը պատահական չէ. նրա 6 աշակերտներից կեսն ունեն լավ առաջադիմություն, ներքին մոտիվացիա, ձգտում՝ ուսման նկատմամբ, իսկ կեսը՝ թույլ առաջադիմություն, առարկայի նկատմամբ պակաս հետաքրքրվածություն:

ՕՐՎԱ ԴԱՍԻ ՊԼԱՆ

ԴԱՍԱՐԱՆԸ՝ 8-րդ

ԴԱՍԻ ԹԵՄԱՆ՝ Ստորոգյալի արտահայտությունը. պարզ ստորոգյալ

ԴԱՍԻ ՏԻՊԸ՝ նոր նյութի հաղորդման դաս

ԴԱՍԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՝ 45 րոպե

ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Ա. ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ՝

- ✓ Իմանալ պարզ ստորոգյալի առանձնահատկությունները
- ✓ Ճանաչել գրավոր խոսքում

Բ. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ՝

- ✓ Տրամաբանելու
- ✓ Վերլուծելու
- ✓ Լսելու
- ✓ Ընկալելու
- ✓ Երևույթը սահմանելու
- ✓ Համագործակցելու

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՐԱԳԱՆԵՐ՝ դասագիրք, գրատախտակ, A 4 չափի թղթեր, քարտեր՝ առաջադրանքներով, T-աձև աղյուսակներով:

ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ՝ թեմային առնչվող պաստառներ

ՄԵԹՈԴՆԵՐ, ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԵՐ ԵՎ ԵՂԱՆԱԿՆԵՐ՝ ԽԻԿ համակարգ, մտագրոհ, գաղափարների քարտեզ, T-աձև աղյուսակ,զրույց, քարտերով աշխատանք, խմբային աշխատանք:

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ստորոգյալ, պարզ ստորոգյալ, բաղադրյալ ստորոգյալ, կրկնավոր և հարադիր բայեր:

ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՄԱՍ

ԽԹԱՆՄԱՆ ՓՈՒԼԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Կիրառվում է **Մտագրոհի** մեթոդը: Հարցեր են ուղղվում դասարանին «Նախադասության անդամներ» թեմայի շուրջ: Թարմացվում են ենթակայի, ստորոգյալի, լրացման վերաբերյալ գիտելիքները: Այս հարցին հիմանականում անդրադառնում են մի քիչ թույլ սովորողները: Ապա բարձր առաջադիմություն ունեցող աշակերտները կազմում են գաղափարների քարտեզ:



Գծագիր 1-ին: «Նախադասության անդամներ» թեմայով գաղափարների քարտեզ

Արդյունքում և՛ թույլ, և՛ ուժեղ առաջադիմություն ունեցող աշակերտները մասնակցում են դասապրոցեսին և փորձում են համատեղ ուժերով կատարել առաջադրանքը:

Պարզ և բաղադրյալ բառերը գաղափարների քարտեզի վրա ուսուցիչն է ավելացնում: Ապա մի քանի բառով ներկայացնում է, որ ստորոգյալն ունի պարզ և բաղադրյալ տեսակներ: Սակայն *պարզ* ասելով՝ չպիտի հասկանալ *դյուրին*, *հեշտ*: Այս հարցում աշակերտներին կօգնեն առաջադրանքները, որոնք կբաժանվեն իրենց:

ԻՄԱՍՏԻ ԸՆԿԱԼՄԱՆ ՓՈՒԼԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Անհարժեշտ է աշակերտներին խմբավորել այնպես, որ ամեն խմբում լինեն տարբեր ընդունակությունների և տարբեր առաջադիմություններ ունեցող աշակերտներ, և տալ քարտեր, որոնք պարունակում են նախադասություններ: Կարելի է առաջարկել դուրս գրել այն ստորոգյալները, որոնք արտահայտված են բայերով, քանի որ բայերի մասին նրանք արդեն իսկ որոշակի գիտելիք ունեն: Այնուհետև առանձնացնել Т-աձև աղյուսակի մի թևում կազմությամբ պարզ և մյուս թևում կրկնավոր և հարադիր բայերը:

Կազմությամբ պարզ բայեր	Կրկնավոր և հարադիր բայեր

Գծագիր 2-րդ: Т- աձև աղյուսակ՝ պարզ, կրկնավոր և հարադիր բայերի վերաբերյալ

Այդ գործողությունից հետո պետք է ամփոփել կատարած աշխատանքը: նոր Նյութի հաղորդումը ամփոփել կարելի է զրույցի միջոցով:

ԿՇՌԱԴԱՏՄԱՆ, ԳՆԱՀԱՏՄԱՆ ՓՈՒԼԻ ՆԿԱՐԱԳՈՒԹՅՈՒՆԸ

Այս փուլում անհրաժեշտ է խմբերին հանձնարարել քարտերով աշխատանք: Առաջադրանքներում հանձնարարությունները հիմնականում ուղղված են թեմայի ամփոփմանը: Ավարտին ողջ գործընթացը ամփոփվում է, աշակերտները գնահատվում են:

ՏՆԱՅԻՆ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հանձնարարվում է դասագրքի առաջադրանքներից:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սույն հետազոտության հիման վրա հանգում ենք հետևյալ եզրակացությունների.

1. Տարբերակված ուսուցումը ուսումնական գործընթացի կազմակերպման ձև է, որի ժամանակ ուսուցիչը, աշխատելով մի խումբ աշակերտների հետ, հաշվի է առնում ուսումնական գործընթացի համար նշանակալի ցանկացած որակի առկայությունը:
2. Տարբերակված ուսուցման ռազմավարությունների կիրառումը, անկասկած, թույլ է տալիս ուսուցման ընթացքում հաշվի առնել աշակերտների հոգեբանական, ուսումնական ոճերի, կրթական կարիքների և այլ տարբերությունները և դրանք օգտագործել ուսուցման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:
3. Աշակերտների առաջադիմությանը նպաստում է նաև տարբերակցված ուսուցման ռազմավարությունների կիրառման ազդեցությունը աշակերտների ներգրավվածության, մոտիվացիայի վրա, ինչի արդյունքում ուսումնառության ընթացքում տարբերակված ուսուցման կիրառումը դասարանի պասիվ աշակերտների մոտ գրանցվում է ուշադրության աճ և ակտիվ մասնակցություն, ինչը ավանդական ուսուցման մեթոդով չէր հաջողվում:
4. Հայոց լեզվի ուսուցման ժամանակ տարբերակված ուսուցման դեպքում ուսուցիչը դառնում է ոչ միայն նոր տեղեկության հաղորդող, այլև աշակերտներին սովորեցնում է ինքնուրույն աշխատելու, ինքնավերահսկելու, փոխադարձ վերահսկելու, գիտելիքներ ձեռք բերելու հմտություններ, եզրակացություններ և ընդհանրացումներ անելու կարողություններ:
5. Տարբերակված ուսուցման մեթոդը հնարավորություն է ընձեռնում ուսումնական գործընթացը կազմակերպել՝ հաշվի առնելով անձի անհատական առանձնահատկությունները և ապահովել նյութի հեշտ յուրացումը՝ համապատասխանեցնելով երեխաների ճանաչողական պահանջմունքներին և անհատական առանձնահատկություններին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ամիրջանյան Յու., Սահակյան Ա., Մանկավարժություն, Եր., 2005:
2. Ենգիբարյան Լ., Տարբերակված ուսուցման ռազմավարությունների կիրառումը ուսումնառության խթանման համար, https://lib.armedu.am/files/resource/files/2022-10-03/6b2bcf77477c45623e137ede8527017a.pdf (հասանելի՝ 02.11.2023):
3. Ժամանակակից մանկավարժական մոտեցումները գործողության մեջ, Եր., 2005:
4. Խաչատրյան Ս., Ուսուցման արդյունավետ հնարներ, Եր., 2020:
5. Հովհաննիսյան Գ., Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները/ Ձեռնարկ ուսուցիչների համար, Եր., 2004:
6. Иванов М., Дифференцированное обучение младших школьников», «Начальная школа», №11, М., 1994:
7. Андреев В., Педагогика творческого саморазвития. Инновационный курс, Казань, 1996: